ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 5, 1952 Общественные науки

Ա. Հակոբյան

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ*

Անդրկովկասի ժողովուրդների պայքարը իրենց ազատության և անկախության համար 20-րդ դարի սկզբից սերտորեն շաղկապվեց Ռուսաստանի բանվոր դասակարգի ու նրա ավանգարդի՝ Լենինի—Ստալինի պարտիայի գլխավորած մեծ պայքարի հետ։ Շահագործող դասակարգերի դեմ մղած այդ պայքարում մեր երկրի բազմազգ բանվորներն ու գյուղացիները հարաճուն կերպով ամրապնդել են իրենց ինտերնացիոնալ կապերը, կոփվել և ձեռք են բերել ռևոլուցիոն հսկայական փորձ։

Անդրկովկասի բանվորներն ու գյուղացիները բարեկամական սերտ կապ հաստատելով ռուս մեծ ժողովրդի հետ, բոլշևիկների փառապանծ պարտիայի ղեկավարությամբ հերոսական պայքար մղեցին ցարիզմի և բուրժուազիայի դեմ՝ հանուն իրենց ազատության։

Ամբողջ Ռուսաստանի, ինչպես և Անդրկովկասի ժողովուրդներին վերջնական ազատություն բերեց մարդկային հասարակության պատմության մեջ նոր դարագլուխ կազմող Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիան։

Ընկեր Ստալինը նշում է, որ 1917 թվականի փետրվարյան ռևոլուցիան էական փոփոխություններ չմտցրեց Անդրկովկասի աշխատավոր դասակարգերի դրության մեջ, որովհետև «ամբողջ իշխանությունը մնում էր ունևոր դասակարգերի ձեռքին»[1]։ Միայն Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիան «սուր կերպով փոխեց դրությունը։ Նա մեկ շարժումով տակն ու վրա արեց բոլոր հարաբերությունները, դնելով իշխանությունը աշխատավոր դասակարգերի ձեռքն անցնելու հարցը։ «Ամբողջ իշխանությունը բանվորներին ու գյուղացիներինն կանչը որոտալից տարածվեց ամբողջ երկրով մեկ, ոտքի հանելով ճնշված մասսաներինն»[2]։ Սոցիալիստական ռևոլուցիան հաղթելով կենտրոնում, արագությամբ տարածվեց ամբողջ Ռուսաստանում, ընդգրկելով նրա բոլոր ծայրամասերը, այդ թվում նաև Անդրկովկասը։

* * *

Անդրկովկասի ռևոլուցիոն շարժումների պատմության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում երկրամասի միակ արդյունաբերական օազիսը հանդիսացող Բաքվի պրոլետարիատի հերոսական պայքարը ցարական ինքնակալության և բոլոր շահագործողների դեմ։ Ընկեր Ստալինը Բաքուն համարում էր «Ռուսաստանի ռևոլուցիոն կենտրոններից մեկը և Կովկասի ամենառևոլուցիոն կենտրոնը»[3]։ Ինչպես ամբողջ Անդրկովկասի, նույնպես

* Զեկուցված է Հայկական ՍՍՌ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի ժողովում, նվիրված Սովետական Ադրբեջանի 32-րդ տարեդարձին։

1 Ի. Ստալին, Երկեր, հատ. 4, Հայպետհրատ, 1948 թ., էջ 59։

2 Նույն տեղում, էջ 60։

3 Ի. Ստալին, Երկեր, հատ. 1, Հայպետհրատ, 1946 թ., էջ 211։

և Բաքվի պրոլետարիատի ռևոլուցիոն պայքարի ամբողջ պատմությունը անխզելիորեն կապված է մեծ Լենինի հավատարիմ զինակից Ի. Վ. Ստալինի անվան և ռևոլուցիոն գործունեության հետ։

ՌՍԴԲՊ 5-րդ համագումարից հետո, 1907 թվականի հուլիսից, պարտիայի կամքով Ի. Վ. Ստալինը գալիս է Բաքու։ Սկսվում է ընկեր Ստալինի ռևոլուցիոն գործունեության Բաքվի շրջանը։ Ինչպես ասված է ընկեր Ստալինի համառոտ կենսագրության մեջ «Այստեղ նա եռուն աշխատանք է կատարում Բաքվի կազմակերպությունը Լենինի լոզունգների շուրջը համախմբելու, բանվորական մասսաներին բոլշևիզմի դրոշի ներքո նվաճելու ուղղությամբ։ Ստալինը պայքար է կազմակերպում Բաքվի բանվորական շրջաններից (Բալախանի, Բիբի-Հեյբաթ, Սև քաղաք, Սպիտակ քաղաք) մենշևիկներին դուրս մղելու համար։ Ստալինը ղեկավարում է բոլշևիկյան անլեգալ և լեգալ օրգանները («Բակինսկի Պրոլետարի», «Գուդոկ», «Բակինսկի Ռաբոչի»)։ Ստալինը ղեկավարում է 3-րդ Պետական դումայի ընտրությունների կամպանիան»[1]։ Այստեղ ընկեր Ստալինն իր շուրջն է համախմբում փորձված լենինյանների ամուր կորիզը՝ Ֆիոլետովին, Սարատովեցին (Եֆիմով), Վացեկին, Բոկովին, Մալիգինին, Օրջոնիկիձեին, Ջափարիձեին, Շահումյանին, Սպանդարյանին, Խանլարին, Մահմեդովին, Ազիզբեկովին, Քյազի Մահմեդին և ուրիշներին։ «Բաքուն դառնում է բոլշևիզմի միջնաբերդը։ Ստալինի ղեկավարությամբ Բաքվի պրոլետարիատը հերոսական պայքար է մղում, գտնվելով համառուսաստանյան ռևոլուցիոն շարժման առաջին շարքերում»[2]։

Բաքվի և ամբողջ Ադրբեջանի բոլշևիկյան կազմակերպությունը ստեղծվել, աճել ու ամրապնդվել է ընկեր Ստալինի անմիջական ղեկավարությամբ։

Զինված Մարքսի—Էնգելսի—Լենինի—Ստալինի ռևոլուցիոն ուսմունքով, Բաքվի բազմազգ բանվորներն իրենց ինտերնացիոնալ համախմբվածությամբ և հերոսական պայքարով նորանոր էջեր են գրում ոչ միայն Անդրկովկասի, այլև ամբողջ Ռուսաստանի ռևոլուցիոն շարժումների պատմության մեջ։

Այդ պայքարը ավելի բարձր աստիճանի է հասնում 1917 թվականին։ Այդ ժամանակ Բաքվի բոլշևիկյան կազմակերպության գլուխը կանգնած Լենինի—Ստալինի հավատարիմ զինակիցներ, պարտիայի ականավոր գործիչներ Ս. Շահումյանի, Ա. Ջափարիձեի, Մ. Ազիզբեկովի ղեկավարությամբ Բաքվի պրոլետարիատը շարունակում է պայքարը շահագործող դասակարգերի տիրապետության դեմ։ Պարտիայի ապրիլյան կոնֆերանսից հետո, որը հաստատեց Վ. Ի. Լենինի ապրիլյան հռչակավոր թեզիսները, Լենինի, Ստալինի անմիջական ցուցումների հիման վրա Անդրկովկասի բոլշևիկները խզում են կապերը մենշևիկների հետ և Բաքվում, Թիֆլիսում, Բաթումում ու այլ քաղաքներում ստեղծում են ինքնուրույն բոլշևիկյան կազմակերպություններ[3]։ 1917 թվականի մարտին Թիֆլիսում սկսվում է հրատա-

---

[1] Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալին. Համառոտ կենսագրություն, Հայպետհրատ, 1947 թ., էջ 46—47։

[2] Նույն տեղում, էջ 48։

[3] Տե՛ս История гражданской войны в СССР, т. II, изд. второе, Госполитиздат, 1947, стр. 253.

բակվել «Կավկազսկի Ռաբոչիյ», իսկ Բաքվում՝ «Բակինսկի Ռաբոչիյ» բոլշևիկյան թերթերը, որոնք խոշոր դեր են կատարում սովետական կարգերի համար մղվող պայքարում, աշխատավորական մասսաներին բոլշևիկյան կազմակերպությունների շուրջը համախմբելու, դասակարգային թշնամու մերկացման գործում։ Ինչպես ցույց է տալիս ընկեր Ստալինը, Անդրկովկասում մասսաների բոլշևիկացման և սովետական իշխանության հաղթանակի համար մղվող պայքարում կային լուրջ դժվարություններ։ 1918 թվականի մարտին «Պրավդայում» հրապարակված «Անդրկովկասի կոնտրրևոլուցիոներները սոցիալիզմի դիմակի տակ» հոդվածում ընկեր Ստալինը Անդրկովկասի համար նշում էր երկու բնորոշ գիծ.

«Թվում է, թե Ռուսաստանի Ֆեդերացիայի բոլոր ծայրամասերից Անդրկովկասն ամենաբնորոշ անկյունն է ազգային կազմի հարստության և բազմազանության իմաստով։ Վրացիներ ու ռուսներ, հայեր ու ադրբեջանական թաթարներ, թուրքեր ու լեզգիներ, օսեր ու արխազներ,—այս է Անդրկովկասի յոթմիլիոնանոց բնակչության ազգային բազմազանության բնավ ոչ-լրիվ պատկերը»[1]։ Ինչպես նշում է ընկեր Ստալինը, ազգային հակասությունների բարդ միահյուսվածությունը խիստ «հարմար» իրադրություն էր «ստեղծում դասակարգային պայքարը ազգային դրոշակներով ու պաճուճանքներով քողարկելու համար»[2]։

Անդրկովկասի մյուս բնորոշ գիծը հանդիսանում էր նրա տնտեսական հետամնացությունը։

«Անդրկովկասի մյուս, ոչ-պակաս բնորոշ գիծը նրա տնտեսական հետամնացությունն է,—ասում է ընկեր Ստալինը։—Եթե չհաշվենք Բաքուն, երկրամասի այդ արդյունաբերական օազիսը, որը գլխավորապես արտաքին կապիտալով է շարժվում, ապա Անդրկովկասը ներկայացնում է մի ագրարային երկիր ավելի կամ պակաս զարգացած առևտրական կյանքով ծայրամասերում, ծովերի ափերին, և զուտ ճորտատիրական կացութաձևի դեռևս ամուր մնացորդներով կենտրոնում»[3]։

Փետրվարյան ռևոլուցիայից անմիջապես հետո, 1917 թ. մարտին ժամանակավոր բուրժուական կառավարությունը Կովկասի փոխարքա և կովկասյան ռազմաճակատի զորքերի հրամանատար Ն. Ն. Ռոմանովի փոխարեն երկրամասի ղեկավարությունը հանձնում է Կովկասյան հատուկ կոմիտեին (Озаком), որը կազմված էր բացահայտ կոնտրռևոլուցիոն տարրերից։ Այդ ժամանակ ինչպես Ռուսաստանում, նույնպես և Անդրկովկասում, բանվորների և զինվորների դեպուտատների սովետների զգալի մասում մեծամասնություն էին կազմում մենշևիկները, էսեռները և բուրժուա-նացիոնալիստական մյուս թափթփուկները, որոնք ամեն կերպ ձգտում էին երկրամասում ծավալված դասակարգային պայքարը քողարկել ազգային պայքարի դրոշով։ Մինչև անգամ Բաքվում, այդ խոշորագույն ռևոլուցիոն կենտրոնում, ուր բանվորական դեպուտատների սովետի առաջին նախագահ ընտրվեց կոփված բոլշևիկ Ստ. Շահումյանը—սովետի պլենումը սկզբում իր ճնշող մեծամասնությամբ մենշևիկո-էսեռական էր։ Դրա շնորհիվ

[1] Ի. Ստալին, Երկեր, հատ. 4, էջ 38։
[2] Նույն տեղում։
[3] Նույն տեղում, էջ 38—39։

այդ ստոր թշնամիներին հաջողվեց 1917 թ. մայիսյան ընտրությունների ժամանակ Ստ. Շահումյանի փոխարեն Բաքվի սովետի նախագահ ընտրել իրենց ներկայացուցչին։ Սակայն, այդ երկար չի տևում։ Ստ. Շահումյանի, Մ. Ազիզբեկովի և Ա. Ջափարիձեի ղեկավարությամբ Բաքվի բոլշևիկների ծավալուն աշխատանքի և պայքարի շնորհիվ, ինչպես նաև հուլիսյան դեպքերից ու կոռնիլովյան խռովության ջախջախումից հետո, Բաքվում իրադրությունը խիստ փոխվում է հօգուտ բոլշևիկների։ Օգոստոսի 30-ին, Բաքվի Սովետի նիստը, որին, բացի դեպուտատներից, մասնակցում էին բանվորների ու զինվորների մոտ հազար ներկայացուցիչներ, առաջին անգամ ընդունում է բոլշևիկյան որոշում։ Այստեղ բոլշևիկները առաջադրում են Բաքվի Սովետի վերընտրությունների պահանջը, որը լայն մասսաների կողմից արժանանում է ջերմ պաշտպանության։

Մեծ չափով ուժեղանում է բոլշևիկների ազդեցությունը պրոֆմիություններում, հատկապես նավթարդյունաբերության մեջ աշխատող բանվորների պրոֆմիությունում, որի նախագահն էր աննկուն բոլշևիկ Ի. Ֆիոլետովը։ Անդրկովկասում և հատկապես Ադրբեջանում լայն ծավալ է ընդունում գյուղացիական շարժումը։ Կովկասյան ռազմաճակատի զորքերի մեջ տիրապետող է դառնում բոլշևիկների ազդեցությունը։

Այսպիսի իրադրության պայմաններում է, որ 1917 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին բոլշևիկների ղեկավարությամբ Բաքվում տեղի է ունենում ընդհանուր քաղաքական գործադուլ, որին մասնակցում է քաղաքի ամբողջ բանվորությունը։ Գործադուլը վերջանում է բանվորների լիակատար հաղթանակով։ Նավթարդյունաբերողների հետ կնքվում է կոլեկտիվ պայմանագիր, որը մշակել ու պատրաստել էին բանվորները։ Բաքվի բանվորների այդ նշանակալից հաղթանակի համար նրանց ողջունում է բոլշևիկների պարտիայի Կենտրոնական Կոմիտեն[1]։ Այդ հաղթանակից հետո Բաքվում է՛լ ավելի է մեծանում բոլշևիկների ազդեցությունը։

1917 թվականի սեպտեմբերին Ստ. Շահումյանը կարճ ժամանակով լինում է Պետրոգրադում, մասնակցում է պարտիայի Կենտկոմի նիստին, ուր քննարկվում են Լենինի նամակները զինված ապստամբության մասին։ Ստանալով դիրեկտիվներ պարտիայի Կենտկոմից, Շահումյանը վերադառնում է Անդրկովկաս։ Նոյեմբերի 2—7-ը Թիֆլիսում նա ղեկավարում է Կովկասի բոլշևիկյան կազմակերպությունների 1-ին համագումարը, որը իր ընդունած որոշումների հիմքում դնում է պարտիայի Կենտկոմի դիրեկտիվները՝ զինված ապստամբության մասին։

«Այնինչ,—ասում է ընկեր Բերիան,—օպորտունիստների Թիֆլիսի ղեկավար խումբը՝ ընկ. Ֆ. Մախարաձեն և Բ. Մդիվանին, Մ. Օկուջավան, Մ. Տորոշելիձեն և ուրիշները, հակառակ Լենինի—Ստալինի ցուցումներին, վճռաբար հրաժարվեցին Վրաստանում և Անդրկովկասում իշխանության համար զինված պայքար նախապատրաստելուց և անցկացնելուց, փաստորեն մենշևիկներին հանձնեց Թիֆլիսի զինանոցը, հրաժարվեց զինվորների մեջ ագիտացիա մղել սովետական իշխանության համար և օգտագործել կովկասյան ճակատի ռևոլուցիոն զինվորներին պայքարելու Անդրկովկասի կոնտրռևոլուցիոն պարտիաների (մենշևիկների, դաշնակների, մուսավաթա-

[1] Տե՛ս История гражданской войны в СССР, т. II, изд. второе, стр. 156.

կանների) բլոկի տապալման համար, պարտիաներ, որոնք Փետրվարյան ռևոլուցիայից հետո գրավել էին իշխանությունը»[1]։

Հատկապես օպորտունիստական այդ խմբի դավաճանական գործունեության հետևանքով կանխորոշվեց սովետական իշխանության համար մղվող պայքարի և այդ իշխանության հաղթանակի ձգձգումը Անդրկովկասի համարյա բոլոր վճռական կենտրոններում, բացի Բաքվից[2]։ Բաքվի բոլշևիկների ծավալուն պայքարի շնորհիվ հոկտեմբերի կեսերին քաղաքային Սովետի դեկավարությունը էսեռ-մենշևիկյան բլոկից անցնում է բոլշևիկների ձեռքը։ Ստ. Շահումյանի գլխավորությամբ կազմակերպվում է ժամանակավոր Գործադիր Կոմիտե։ Սովետի հոկտեմբերի 15-ի ընդլայնած նիստում, որին մասնակցում էին բանվորների և զինվորների ներկայացուցիչները, ընտրվում են դելեգատներ Սովետների Համառուսաստանյան 2-րդ համագումարի համար։ Նիստն ընդունում է բանաձև շահագործողների տիրապետությունը տապալելու և իշխանությունը բանվորների, զինվորների ու գյուղացիների դեպուտատների Սովետներին հանձնելու անհրաժեշտության մասին։

Հաղթահարելով կոնտրռևոլուցիոն ուժերի դիմադրությունը և մյուս բոլոր դժվարությունները, Բաքվի բոլշևիկները հաստատ կերպով ընթանում էին դեպի իշխանության նվաճումը՝ զինված ապստամբության միջոցով։

* * *

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիայի հաղթանակի լուրը Բաքու է հասնում հոկտեմբերի 26-ին (նոյեմբերի 8-ին)։ Այդ լուրը Բաքվի և Ադրբեջանի աշխատավորները դիմավորում են հսկայական խանդավառությամբ։ Բոլշևիկների գլխավորած Սովետը հենց նույն օրը ճանաչում է Ռուսաստանի սովետական իշխանությունը։ Այդ մեծ հաղթանակի առթիվ Բաքվի Սովետն ընդունում է նրա նախագահ Ստ. Շահումյանի կողմից ջերմ խոսքերով գրված իր մարտական կոչը, ուր ասված է.

«Բաղաքացինե՛ր։

Պետրոգրադի ռևոլուցիոն պրոլետարիատը և կայազորը տապալված են հայտարարել Կերենսկու—Կոնովալովի բուրժուական Վրոալիցիոն կառավարությունը և բանվորների ու զինվորների դեպուտատների Սովետների Համագումարը հռչակել է Ժողովրդական Կոմիսարների նոր կառավարություն Լենինի գլխավորությամբ...

Նոր, ռևոլուցիոն կառավարությունը դեկրետ է հրատարակել հաշտության մասին, կալվածատիրական հողերը անմիջապես բռնագրավելու մասին և այլն։ Նա ամենաեռանդուն միջոցներ է ձեռք առնում պատերազմը լիկվիդացնելու և երկրի ներքին դրությունը բարելավելու համար։

Բոլորը, ովքեր ցանկանում են ժողովրդի բարօրություն և խաղաղության ու կարգի ամենաշուտ հաստատում տանջված ու խոշտանգված երկ-

---

[1] Լ. Բերիա, Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը, Հայպետհրատ, 1945 թ., էջ 224—225։

[2] Տես История гражданской войны в СССР, т. II, изд. второе, стр. 156.

բում, պետք է անհապաղ և վճռականորեն կանգնեն Լենինի գլխավորած Ժողովրդական Կոմիսարների նոր կառավարության կողմը»[1]։

Կոչը վերջանում է հետևյալ խոսքերով.

«Կեցցե՛ Պետերբուրգի ռևոլուցիոն պրոլետարիատը և կայազորը։

Կեցցե՛ ռևոլուցիոն նոր կառավարությունը Լենինի գլխավորությամբ։

Կեցցե՛ Սովետների իշխանությունը»[2]։

Չնայած կոնտրռևոլուցիոն ուժերի՝ մենշևիկների, մուսավաթիստների, էսեռների ու դաշնակների բլոկի կատաղի դիմադրությանը, Բաքվի Սովետը, բոլշևիկների ղեկավարությամբ, Հոկտեմբերի 31-ի նիստում բանաձև է ընդունում ամբողջ իշխանությունը բանվորների, զինվորների ու գյուղացիների սովետներին անցնելու մասին, իսկ նոյեմբերի 2-ին լսելով Ստ. Շահումյանի զեկուցումը, հաստատում է այդ անցումը գործնականապես իրականացնելու ծրագիրը[3]։

«Բաքվի բոլշևիկները հասկանում էին,—գրում է ընկեր Մ. Դ. Բաղիրովը,—որ իշխանությունը լիովին իրենց ձեռքն առնելու համար անհրաժեշտ է համառ ու դաժան պայքարում ջախջախել կոնտրռևոլուցիայի ուժերը։ Ընկեր Ստալինի ուղղակի ցուցումով Բաքվի ու Ադրբեջանի բոլշևիկները աշխատավոր մասսաներին անխոնջ կերպով համախմբում ու պատրաստում էին իշխանության համար վճռական մարտերի»[4]։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիայի հաղթանակից հետո ինչպես ամբողջ Անդրկովկասում, նույնպես և նրա մի մասը հանդիսացող Ադրբեջանում դասակարգային պայքարը մտավ նոր փուլի մեջ։ Ամբողջ երկրամասի բանվորներն ու գյուղացիները ոգևորված սոցիալիստական ռևոլուցիայի հաղթանակով, բոլշևիկների պարտիայի ղեկավարությամբ վճռական պայքարի էին դուրս եկել հանուն սովետական իշխանության հաղթանակի, պայքար, որի ավանգարդում գտնվում էր Բաքվի հերոսական պրոլետարիատը։ Ռուսաստանի Ժողովրդական Կոմիսարների Սովետին ուղարկած նամակում Ստ. Շահումյանը գրում էր. «Անդրկովկասը մտել է ակտիվ զինված պայքարի շրջան՝ Սովետական Իշխանության համար»[5]։

1917 թվականի դեկտեմբերի 16-ին Սովետական Ռուսաստանի Ժողովրդական Կոմիսարների Սովետի նիստը լսում է ընկեր Ստալինի զեկուցումը Կովկասի դրության մասին։ Նույն նիստում ընկեր Ստալինի առաջարկով Ժողկոմսովետը որոշում է բոլշևիկների պարտիայի Կենտկոմի անդամ, Բաքվի Սովետի նախագահ Ստ. Շահումյանին նշանակել Կովկասի ժամանակավոր արտակարգ կոմիսար և օգնության կարգով 500 հազար ռուբլի է բաց թողնում Բաքվի Սովետին, իսկ դեկտեմբերի 18-ին Ժողկոմսովետի նախագահ Վ. Ի. Լենինը և Ազգությունների Գործերի Ժողովրդական Կոմիսար Ի. Վ. Ստալինը ստորագրում են Շահումյանի մանդատը, որը բաց թողնված դրամի հետ միասին Բաքու է հասցնում բոլշևիկ հերոս Կամոն։

Անդրկովկասում, այդ թվում նաև Ադրբեջանում սովետական իշխա-

---

[1] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, Հայպետհրատ, 1948 թ., էջ 498—499։

[2] Նույն տեղում, էջ 500։

[3] Տե՛ս Մ. Դ. Բաղիրով, Բաքվի և Ադրբեջանի բոլշևիկյան կազմակերպության պատմությունից, Հայպետհրատ, 1944 թ., էջ 159։

[4] Նույն տեղում։

[5] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, էջ 505։

նության համար ծավալված պայքարը հանդիպում է ներքին և արտաքին կոնտրռևոլուցիոն ուժերի կատաղի դիմադրության։ Այդ ուժերը իրենց առաջ նպատակ էին դրել Անդրկովկասը անջատել Սովետական Ռուսաստանից, այն դարձնել օտարերկրյա իմպերիալիստների գաղութ և պայքարի բաց ընդդեմ Սովետական Ռուսաստանի։

«Անդրկովկասի ունևոր դասակարգերը ակնբախ տեսան,—գրում է ընկեր Ստալինը,—որ Հոկտեմբերյան ռևոլուցիան և Սովետական իշխանությունը անխուսափելի մահ են բերում նրանց։ Պայքարը Սովետական իշխանության դեմ, այդ պատճառով էլ, դարձավ նրանց համար կյանքի ու մահվան հարց։ Իսկ «սոցիալիստական» էսեռա-մենշևիկյան ինտելիգենցիան, որն արդեն ճաշակել էր իշխանության իմացության ծառից և դրված է այժմ այդ իշխանությունը կորցնելու հեռանկարի առաջ, ավտոմատորեն դաշինքի մեջ մտավ ունևոր դասակարգերի հետ։

Այսպես ստեղծվեց հակասովետական կոալիցիան Անդրկովկասում»[1]։

Այդ կոալիցիայի արտահայտությունը հանդիսացավ 1917 թվականի նոյեմբերի 15-ին Թիֆլիսում մենշևիկների, էսեռների, մուսավաթիստների ու դաշնակների ներկայացուցիչների կողմից կազմված կոնտրռևոլուցիոն «կառավարությունը»՝ Անդրկովկասյան Կոմիսարիատը, որն իր գործունեությունը սկսեց զինված բանդաներ կազմակերպելով՝ երկրամասում ռեվոլուցիոն շարժումը խեղդելու, առաջին հերթին սովետական իշխանության դրոշը բարձրացրած «պրոլետարական Բաքվի վրա հարձակվելու համար»[2]։ Անդրկովկասյան Կոմիսարիատի անմիջական հրամանով 1918 թ. հունվարին Շամխոր կայարանի մոտ նրա զինված բանդաները ավազակային հարձակում են գործում թյուրքական ռազմաճակատից Ռուսաստան վերադարձող զինվորների վրա, զինաթափում են նրանց և կոտորում հազարավոր ռևոլուցիոն զինվորներ։

Կենսագործելով Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Ստալինի ցուցումները, Ստ. Շահումյանի, Մ. Ազիզբեկովի, Ա. Ջափարիձեի, Ի. Ֆիոլետովի, Ա. Միկոյանի ղեկավարությամբ Բաքվի պրոլետարիատը շարունակում է համառ ու հերոսական պայքարը ինչպես ներքին կոնտրռևոլուցիայի, այնպես էլ օտարերկրյա ինտերվենտների դեմ։ Գերմանո-տաճկական և անգլիական, ամերիկյան ու ֆրանսիական ինտերվենտները մոլեգնորեն ձգտում էին գրավել Բաքուն, այն դիտելով ոչ միայն որպես նավթի խոշորագույն կենտրոն, այլև պրոլետարական ռևոլուցիայի կարևորագույն օջախներից մեկը Արևելքում։ Էսեռա-մենշևիկյան, դաշնակցական և մուսավաթիստական բուրժուա-նացիոնալիստական պարտիաները, պատրաստ՝ Բաքուն և ամբողջ Անդրկովկասը հանձնելու այդ իմպերիալիստներին և դարձնելու նրանց գաղութը, կատաղաբար պայքարում էին բոլշևիկների և նրանց ետևից գնացող ռեվոլուցիոն մասսաների դեմ։ Շուտով կոնտրռևոլուցիոն զինված բանդաները, հարձակվում են Բաքվի կարմիրգվարդիական զորամասերի վրա։

1918 թվականի մարտի 30-ից մինչև ապրիլի 1-ը քաղաքում ծավալվում են քաղաքացիական ուժեղ կռիվները։ Զորսօրյա կատաղի մարտե-

---

[1] Ի. Ստալին, Երկեր, հատոր 4, էջ 60։

[2] Մ. Դ. Բաղիրով, Բաքվի և Ադրբեջանի բոլշևիկյան կազմակերպության պատմությունից, էջ 162։

ռում, որոնց երկու կողմից մասնակցում էին ավելի քան 20 հազար մարդ,[1] հաղթում են ռևոլուցիոն ուժերը՝ կարմիրդվարդիական զորամասերը։

Այդ հաղթանակի շնորհիվ ծնվում է Բաքվի հերոսական Կոմունան՝ սովետական առաջին իշխանությունը Անդրկովկասում։ Ապրիլի 25-ին կազմակերպվում է Ժողովրդական Կոմիսարների Բաքվի Սովետը, որի կազմի մեջ մտնում են Ստ. Շահումյանը, Մ. Ազիզբեկովը, Ա. Ջափարիձեն, Ի. Ֆիոլետովը և ուրիշները։ Բնութագրելով այդ մարտերում բոլշևիկների ձեռք բերած հաղթանակը, ընկեր Ստալինը նշել է, որ «...թաթար ու ռուս կալվածատերերի ու գեներալների ավանտյուրիստական հարձակումը... կատարյալ ֆիասկոյի ենթարկվեց մուսուլման և ռուս բանվորների ու գյուղացիների կողմից...»[2], որ «Բաքվի Սովետի իշխանությունը ներկայացրել է և ներկայացնում է Բաքվի և նրա շրջանի բոլոր ազգությունների բանվորների ու գյուղացիների իշխանությունը և ամենից առաջ, մուսուլման ժողովրդի իշխանությունը»։

Հակառակ ներքին և արտաքին կոնտրռևոլուցիոն ուժերի ամենակատաղի դիմադրությանը, իր գոյության կարճ ժամանակամիջոցում (1918 թվականի ապրիլի մեկից մինչև հուլիսի 31-ը) Բաքվի Կոմունան, կենսագործելով Լենինի—Ստալինի ցուցումները, խոշոր գործ կատարեց։ Բաքվի Ժողովրդական Կոմիսարների Սովետի ծրագրային դեկլարացիայում, որը հրապարակվեց 1918 թվականի մայիսի մեկին, սովետական իշխանության ամրապնդման ընդհանուր խնդիրներին զուգընթաց, նշված են կոնկրետ միջոցառումներ էկոնոմիկայի սոցիալիստական վերակազմավորման ուղղությամբ։

Բաքվի Կոմունայի առաջին կարևորագույն միջոցառումներից մեկը հանդիսացավ բանկերի աղգայնացումը։ Դրանից հետո նա ձեռնամուխ եղավ ռևոլուցիայի համար կարևորագույն նշանակություն ունեցող նավթարդյունաբերության ազգայնացման նախապատրաստմանը, որը իրագործվեց 1918 թվականի մայիսին։ Թշնամու կողմից օղակված Սովետական Ռուսաստանը, որը Լենինի—Ստալինի ղեկավարությամբ հերոսական պայքար էր տանում ներքին ու արտաքին թշնամիների դեմ, մեծ կարիք էր զգում վառելիքի, հատկապես նավթի։ Նավթարդյունաբերության ազգայնացումով Բաքվի Ժողովրդական Կոմիսարների Սովետը զգալի օգնություն ցույց տվեց Սովետական Ռուսաստանին։ Քաղաքացիական կռիվների ամենածանր օրերին, գերմանո-թյուրքական հորդաների Բաքվի վրա հարձակման ժամանակ, և այն ժամանակ, երբ անգլիական իմպերիալիստները սպառնում էին քաղաքին Իրանի կողմից, Բաքվի Ժողովրդական Կոմիսարների Սովետը՝ հաղթահարելով բոլոր խոչընդոտները, մաքսիմալ չափով նավթ և նավթամթերք էր ուղարկում Սովետական Ռուսաստան։ Միայն երկու ամսում—1918 թվականի մայիսի 1-ից մինչև հուլիսի մեկը, Բաքվից Սովետական Ռուսաստան է ուղարկվել 43.058.773 փութ նավթ և նավթամթերք, և 28.868 փութ բենզին։ Կոմունայի գոյության չորս ամսվա ընթացքում Ռուսաստան է ուղարկվել ընդամենը 80 միլիոն փութ նավթ և նավթամթերք[4]։

---

[1] Տե՛ս Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, էջ 565։
[2] Ի. Ստալին, Երկեր, հատ. 4, էջ 105։
[3] Նույն տեղում, էջ 105—106։
[4] Տե՛ս Вопросы экономики, 1948, № 8, стр. 112.

Առաջնորդվելով Լենինի—Ստալինի ցուցումներով, Կոմունան ազգայնացրեց նաև Կասպից ծովի առևտրական նավատորմը, որը խոշոր դեր խաղաց Բաքվից դեպի Սովետական Ռուսաստան նավթ և այլ նավթամթերքներ փոխադրելու, այնտեղից կենսամթերքները բերելու գործում։ Մայիսի 28-ին Բաքվի Ժողկոմսովետը դեկրետ է հրատարակում խոշոր կապիտալիստ Թաղիևի ձկնարդյունաբերական ձեռնարկությունների ազգայնացման մասին։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխության ազդեցության տակ ինչպես ամբողջ Անդրկովկասում, նույնպես և Ադրբեջանում լայն ծավալ է ընդունում ագրարային շարժումը։ Չնայած կոնտրռևոլուցիոն ուժերի բոլոր ջանքերին՝ այդ շարժումը բոլշևիկների ղեկավարությամբ ավելի ու ավելի է ծավալվում։ Դեռ Կոմունայի հաստատումից առաջ, 1918 թվականի հունվարին Կովկասի գործերի ժամանակավոր արտակարգ կոմիսար Ստ. Շահումյանը Անդրկովկասի մուսուլմանական գավառների գյուղացիական բնակչությանը ուղղած մարտական կոչում գրում էր.

«Գյուղացի եղբայրներ.

Հասել է ժամը, երբ դուք վերջնականապես պետք է թոթափեք Ձեր ուսերից կալվածատեր-հողատերերի, խանների, բեկերի, աղալարների և այլոց դարավոր լուծը։ Խանները, բեկերը և աղալարները ցարական զինվորների օգնությամբ գրեթե բոլոր հողերը իրենց սեփականություն հայտարարելով, ձեզ իսկական ստրուկներ էին դարձրել և երկար ժամանակ անգթորեն թալանում ու կեղեքում էին ձեզ։ Բայց այժմ դրա վերջը հասել է ...Դուք արդեն հունվարի սկզբից ապստամբել եք ձեր բեկերի դեմ և խլում եք նրանց հողերը...

Ռուսաստանի բանվորա-գյուղացիական նոր կառավարությունն ազատություն և բախտավորություն է ցանկանում մուսուլմանական ժողովրդին։

Կորչի խանների ու բեկերի դարավոր լուծը։

Կեցցե Ռուսաստանի բոլոր ազգությունների բանվորների ու գյուղացիների եղբայրությունն ու միասնությունը»[1]։

Բաքվում սովետական կարգերի հաղթանակի ազդեցության տակ Ադրբեջանում գյուղացիական շարժումը բարձր աստիճանի է հասնում 1918 թվականի ապրիլ—մայիս ամիսներին։ Այդ ամիսներին Բաքվի նահանգի մի շարք գավառներում ստեղծվում են գյուղացիական դեպուտատների սովետներ։ Որպես արդյունք խանների ու բեկերի դեմ ծավալված գյուղացիության ելույթների, որոնց օգնում են Բաքվի կոմունայի զինված ուժերը՝ կարմիրգվարդիականները, սովետական իշխանություն է հաստատվում Շամախում, Ղուբայում, Սալյանում, Լենքորանում և մի շարք այլ վայրերում։

«Հսկայական ստեղծագործական աշխատանք կատարելով,—ասում է ընկեր Բաղիրովը,—Բաքվի հերոսական պրոլետարիատը համառ պայքար էր մղում ամբողջ Անդրկովկասում սովետական իշխանություն հաստատելու համար։ 1918 թվականի ամառվա սկզբին կարմիր զորքերը կոնտրռևոլուցիոն բանդաներից ազատեցին Լենքորանը, Սալյանին, Շամախին, Ղուբան։ Սովետական իշխանությունը հաղթանակ տարավ նաև Դերբենդում, ուր աշխատավորների պայքարը ղեկավարում էին ադրբեջանական ժողո-

[1] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, էջ 533—535։

վրրդի լավագույն զավակներ, ստալինյան պանծալի սաներ ընկ. ընկ. Կազի Մահոմեդը, Բունյաթ Սարդարովը, Մուհտադիր Այդինբեկովը»[1]։

Ագրարային հարցի վերաբերյալ հրատարակած իր դեկրետներում Բաքվի Ժողովրդական Կոմիսարների Սովետը նախատեսնում էր՝ այն գավառներում, ուր հաստատվել էին սովետական կարգեր, կատարել ագրարային ռեֆորմ, հողը հանձնել աշխատավոր գյուղացիությանը։ 1918 թվականի հունիսին լույս է տեսնում Բաքվի Ժողկոմսովետի դեկրետը, ուր ասված էր, որ անհրաժեշտ է անմիջապես կատարել բոլոր կալվածատերերի (բեկերի, խաների, մելիքների, իշխանների) հողերի, շենքերի և գույքի բռնագրավում[2]։ Հրատարակվում է դեկրետ նաև մասնավոր սեփականատիրական անտառների բռնագրավման մասին[3]։ Բաքվի բոլշևիկները պրակտիկ կերպով մեծ օգնություն են ցույց տալիս աշխատավոր գյուղացիությանը՝ կենսագործելու հողային ռեֆորմը և լիկվիդացնելու կալվածատիրական հողատիրությունը այն շրջաններում, որտեղ հաստատվել էին սովետական կարգեր։

Մեծ աշխատանք է նախաձեռնում Բաքվի Ժողկոմսովետը նաև ժողովրդական լուսավորության բնագավառում։ Նա սահմանում է ընդհանուր պարտադիր և ձրի ուսուցում՝ մայրենի լեզվով։

Սակայն իր կազմակերպման առաջին իսկ օրերից Բաքվի հերոսական կոմունան գտնվում էր ծանր դրության մեջ։ Սպիտակգվարդիական բանդաները, իշխելով Հյուսիսային Կովկասում, կտրել էին երկաթուղային հաղորդակցությունը Բաքվի և Սովետական Ռուսաստանի միջև։ Մեծ դժվարություններով այդ կապը իրականացվում էր միայն Կասպից ծովի վրայով։ Մենշևիկների, մուսավաթիստների, էսեռների, դաշնակների և մյուս կոնտրռևոլուցիոն թափթփուկների միացյալ ուժերը, ստանալով գերմանաթյուրքական և Անտանտայի ինտերվենտների բազմապիսի օգնությունը, նրանց հետ միասին կատաղի պայքար էին մղում Կոմունայի դեմ։ Նրանց թաքնված և բացահայտ գործակալները Բաքվում ավելի էին ակտիվացրել իրենց քայքայիչ աշխատանքը։ Դնալով ավելի էր ծանրանում կոնտրռևոլուցիոն ուժերի կողմից բլոկադայի ենթարկված Բաքվի Կոմունայի դրությունը։

Ծանր էր նաև քաղաքի պարենային վիճակը։ 1918 թվականի հունիսի 7-ին Վ. Ի. Լենինին և Ի. Վ. Ստալինին ուղարկած նամակում Ստ. Շահումյանը գրում էր, որ քաղաքի պարենային դրությունը ծանր է, որ «բանվորներն ավելի քան երկու ամիս ուղղակի քաղցած են»։ Չնայած դրան «մենք մեզ զգում ենք շատ հաստատուն վիճակում»[4] ասված է նամակում։ Այդ հաստատուն վիճակը Շահումյանը տեսնում էր ռևոլուցիայի մեծ հեռանկարների մեջ, Կոմունայի վեհ նպատակների մեջ և այն բանի մեջ, որ, չնայած քաղցին, Բաքվի հերոսական պրոլետարիատը կրծքով պաշտպանում էր Կոմունան։ Այդ ժամանակ պարենային ծանր դժվարությունների մեջ էր

---

[1] Մ. Դ. Բաղիրով, Բաքվի և Ադրբեջանի բոլշևիկյան կազմակերպության պատմությունից, էջ 172։

[2] Տես Труды Азербайджанского филиала Института Маркса—Энгельса—Ленина при ЦК ВКП(б), 1948, том XII, стр. 173.

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 175։

[4] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, էջ 636։

գտնվում նաև Սովետական Ռուսաստանը։ Չնայած դրան, Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Ստալինի անմիջական ցուցումներով Սովետական Ռուսաստանը պարենային խոշոր օգնություն է ցույց տալիս Բաքվի Կոմունային։ Խոսելով այդ մասին, ընկ. Բաղիրովն ասում է. «Գիտենալով Բաքվի պրոլետարիատի չափազանց ծանր դրությունը, որը պարենի կարիք էր զգում,—ընկեր Ստալինը ամեն օր հոգում էր Ցարիցինից ջրային ճանապարհով հաց ուղարկելու մասին, ամեն ինչ անում էր, որպեսզի նավթ հայթայթեր Սովետական ռեսպուբլիկային և հենց դրանով նպաստեր հերոսական Կարմիր Բանակի հաղթանակին»[1]։

Բաքվի Կոմունայի դրությունը ռազմաճակատում զգալի չափով վատացավ առանձնապես 1918 թվականի հունիսին։ Անդրկովկասի կոնտրռևոլուցիոն ուժերի՝ մուսավաթիստների, դաշնակների, մենշևիկների, էսերների զինված բանդաների հետ միասին, այդ ժամանակ Բաքվի Կոմունայի դեմ կատաղի պայքարի մեջ են մտնում գերմանո-թյուրքական զավթիչների զորքերը, որոնք օկուպացրել էին Վրաստանն ու Հայաստանը և անգլիական ինտերվենտները, որոնք ամրանալով Իրանում, ամեն կերպ ձգտում էին գերմանո-թյուրքական զավթիչներից առաջ տիրանալ Բաքվին։ Ավարտելով զորքերի կենտրոնացումը, հունիսի սկզբին գերմանո-թյուրքական հրամանատարությունը հրաման է տալիս իր զորքերին վերսկսել հարձակումը։ Բաքվի պաշտպանության տագնապալից օրերին, երբ գերմանո-թյուրքական զորքերը ընդհուպ մոտեցել էին քաղաքին, բուրժուա-նացիոնալիստական պարտիաները քաղաքի պաշտպանության անվան տակ պահանջում են Իրանից Բաքու հրավիրել անգլիական ինտերվենտներին, որոնք մեծ ախորժակով շտապում են օկուպացնել այն։ Այդ վճռական օրերին ևս Լենինի—Ստալինի հավատարիմ աշակերտները՝ Բաքվի կոմիսարները աներեր կերպով հանդես են գալիս ռևոլուցիայի ստոր թշնամիներ բուրժուա-նացիոնալիստական պարտիաների կոնտրռևոլուցիոն քաղաքականության դեմ։ Նրանք ձեռք են առնում բոլոր միջոցները՝ ռևոլուցիոն Բաքուն թշնամիներից պաշտպանելու համար։

Հունիսի 15-ին Բաքվի Սովետի նիստի ընդունած բանաձևում ասված է «...Սովետը ամբողջովին հավանություն է տալիս Բաքվի Ժողովրդական Կոմիսարների Սովետի ռևոլուցիոն ծրագրին, մի անգամ ևս հայտարարում է Բաքվի պրոլետարիատի և Սովետական Կարմիր Բանակի պատրաստակամությունը՝ մինչև վերջ պայքարել հարձակվող գերմանո-թյուրքական բանդիտների դեմ, պաշտպանում է իր ազատությունը և անկախությունը և իր անխզելի կապը Ռուսաստանի Սովետական Մեծ ռեսպուբլիկայի հետ։ Մենք հայտարարում ենք, որ թե՛ հաղթանակի դեպքում, և թե՛ պարտության դեպքում, մենք գերմանական գիշատիչներին չենք տա ոչ մի կաթիլ նավթ, որը ձեռք է բերված ժողովրդի աշխատանքով»[2]։

Սակայն թշնամիները կենտրոնացնելով մեծ ուժեր, ավելի են սեղմում հերոս քաղաքի օղակումը, ամենակատաղի դատաստան տեսնելով նրա պաշտպանների հետ։ Ինչպես նշված է Կոմունայի վերջին օրերին Բաքվի բանվորներին ուղղված՝ Ռուսաստանի Կոմունիստական (բոլշևիկների) պարտիայի Բաքվի Կոմիտեի կոչում՝ ռևոլուցիոն իշխանությունը ներկայացնող

[1] Մ. Դ. Բաղիրով, Բաքվի և Ադրբեջանի բոլշևիկյան կազմակերպության պատմությունից, էջ 169։

[2] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, էջ 642։

Բաքվի Ժողովրդական Կոմիսարների Սովետը չէր կարող «համաձայնություն գալ անգլիական իմպերիալիստների հետ, ինչպես և խաղաղության բանակցություններ սկսել գերմանո-թյուրքական իմպերիալիզմի հետ։ Նա կարող է դիմել միայն պրոլետարիատին, ոտքի հանել նրան, սակայն ակներև էր, որ աջ պարտիաների ու բանակի հրամանատարական կազմի նման (դավաճանական—Ա. Հ.) վարքի հետևանքով—դա արդեն ուշ է, որ դա չէր փրկի Բաքուն թշնամու ներխուժումից»[1]։

Քաղաքի շրջապատումը գերմանո-թյուրքական զորքերի կողմից, անգլիական ինտերվենտների ստոր դավերը, իմպերիալիզմի գործակալներ դաշնակների, մենշևիկների, էսեռների ու մուսավաթիստների դավաճանական գործունեությունը և քաղաքում տարածված սովը՝ ջլատում են բանվոր դասակարգի ուժերը։ Ներքին և արտաքին կոնտրռևոլուցիայի ճնշման տակ 1918 թվականի հուլիսի 31-ին ընկնում է Բաքվի հերոսական Կոմունան։ Իշխանությունը ժամանակավորապես նորից անցնում է կոնտրռևոլուցիայի ձեռքը։ Բուրժուա-նացիոնալիստական պարտիաների միացյալ ուժերով օգոստոսի մեկին կազմակերպվում է, այսպես կոչված, «Յենտրոկասպիայի դիկտատուրան»։ Այդ կոնտրռևոլուցիոն «կառավարության» հրավերով օգոստոսի 4-ին Բաքու են մտնում անգլիական ինտերվենտների զորքերը և օկուպացնում քաղաքը։ Դեպի Բաքու գերմանո-թյուրքական զորքերի վերսկսած հարձակման հետևանքով, օգոստոսի 14-ին անգլիական զորքերը թողնում են Բաքուն։ Հաջորդ օրը, օգոստոսի 15-ին Բաքու են մտնում գերմանո-թյուրքական զավթիչները և նրանց վարձկաններ մուսավաթիստները, որոնք ավազակաբար թալանում են քաղաքը և գազանային դատաստան են տեսնում ժողովրդի հետ։

Կոմունայի անկումից հետո ներքին և արտաքին կոնտրռևոլուցիոն ուժերը կատաղաբար հետապնդում են Կոմունայի ղեկավարներին՝ նրանց հետ գազանային դատաստան տեսնելու համար։

Բաքվի Կոմունայի 26 ղեկավարները ձերբակալվում են և անգլիական ինտերվենտների ու նրանց ծառաների՝ էսեռների, մենշևիկների, դաշնակների ձեռքով 1918 թվականի սեպտեմբերի 20-ին գազանաբար գնդակահարվում են Անդրկասպյան ավազուտներում։

Մերկացնելով թշնամիների ստոր դավերը, բաքվի 26 կոմունարների չարագործ սպանության կապակցությամբ ընկեր Ստալինը գրում է. «Անգլիացիներին Բաքու հրավիրելով և բոլշևիկներին մատնելով՝ Բաքվի մենշևիկներն ու էսեռները մտածում էին «օգտագործել» անգլիական «հյուրերին» որպես ուժ, ընդ որում ենթադրվում էր, թե երկրում որպես տերեր կմնան մենշևիկներն ու էսեռները, իսկ «հյուրերը» կդնան իրենց տները։ Փաստորեն հակառակն ստացվեց. «հյուրերը» դարձան անսահմանափակ տերեր, էսեռներն ու մենշևիկները դարձան 26 բոլշևիկյան կոմիսարների չարագործ ու ստոր սպանության անպայման մասնակիցներ...

Մի՞թե պարզ չէ, որ էսեռների ու մենշևիկների դաշինքն իմպերիալիզմի գործակալների հետ ստրուկների ու լակեյների «դաշինք» է իրենց տերերի հետ»[2]։

Չվճռելով իր բոլշևիկ—հերոս ղեկավարների՝ 26 կոմիսարների ծանր

[1] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, էջ 674։
[2] Ի. Ստալին, Երկեր, հատ. 4, էջ 285—286։

կորուստով և լցված անսահման ատելությամբ նրանց չարանենգ սպանությունը կազմակերպողների նկատմամբ, Բաքվի պրոլետարիատը և ամբողջ Ադրբեջանի աշխատավորությունը շարունակում էր պայքարը Կոմունայի գործի համար, Ադրբեջանում սովետական կարգեր հաստատելու համար։

* * *

Առաջին համաշխարհային պատերազմում Գերմանիայի և Թյուրքիայի կրած պարտության, ինչպես նաև Անդրկովկասում ու Բաքվում՝ բոլշևիկների ղեկավարությամբ նրանց զորքերի դեմ ծավալված հերոսական պայքարի շնորհիվ, գերմանո-թյուրքական ինտերվենտները նույն թվականի նոյեմբերի սկզբներին հետ են քաշվում Անդրկովկասից։ Նոյեմբերի 17-ին Բաքուն նորից օկուպացնում են անգլիական զորքերը։ Ամերիկայի և Ֆրանսիայի իմպերիալիստների հետ միասին մեծ ուժեր բերելով, անգլիացիները շուտով օկուպացնում են ամբողջ Անդրկովկասը, այն դարձնելով պայքարի բազա՝ ընդդեմ Սովետական Ռուսաստանի։

Անգլիական իմպերիալիստները, գերմանո-թյուրքական օկուպանտների նման Բաքվում և ամբողջ Անդրկովկասում վարվում էին այնպես, ինչպես իրենց գաղութում։ Գալով Բաքու, անգլիական զորքերի հրամանատար գեներալ Թոմսոնը անմիջապես հրաման է արձակում ժողոֆների ու գործադուլների արգելման և Բաքվում ու նրա շրջակայքում անգլիացիների սահմանած կարգ ու կանոնը խախտողների նկատմամբ մահապատիժ մտցնելու մասին։ Սկսվում է կատաղի տեռորը ռևոլուցիոն մասսաների, առաջին հերթին բոլշևիկների դեմ։ Մուսավաթիստների օգնությամբ անգլիական օկուպանտները դաժանորեն թալանում ու կողոպտում են ամբողջ Ադրբեջանը, նրա հարստությունները։ Ազգությունների Գործերի ժողովրդական Կոմիսարիատի օրգան „Жизнь национальностей“ թերթը այդ մասին 1919 թվականի մայիսի 20-ի համարում գրել է, որ «...Ադրբեջանում... անգլիացիների տիրապետությունը փաստորեն ընդունել է իսկական թալանի բնույթ»։

Լենինյան-ստալինյան մարտական ինտերնացիոնալ տրադիցիաներով դաստիարակված Բաքվի պրոլետարիատը և նրա հետ ամբողջ Ադրբեջանի աշխատավորները, չխոնարհելով իրենց գլուխը ինտերվենտների ու մուսավաթիստների դաժան հալածանքների առաջ, կոփված լենինյաններ՝ Ս. Օրջոնիկիձեի, Ս. Կիրովի, Ա. Միկոյանի և Լ. Բերիայի ղեկավարությամբ շարունակում են վճռական պայքարը հանուն սովետական իշխանության հաղթանակի։ Ընկեր Մ. Դ. Բաղիրովը գրում է. «Ընկեր Միկոյանը դուրս պրծնելով դաշնակ-էսեռական դահիճների ձեռքից, 1919 թվականի փետրվարին գալիս է Բաքու, ուր վերստին անցնում է Ադրբեջանի բոլշևիկների գլուխ, ամրացնում է պարտիական կազմակերպության շարքերը, աշխուժացնում ու կարգավորում է նրա ընդհատակյա աշխատանքը, ղեկավարում է Բաքվի պրոլետարիատի և Ադրբեջանի աշխատավորների պայքարը կոնտրռևոլուցիոն «Մուսավաթ» և նրա տերերի՝ օտարերկրյա իմպերիալիստների դեմ, դաշնակների, էսեռների, մենշևիկների և ադրբեջանական ժողովրդի այլ թշնամիների դեմ»[1]։

[1] Մ. Դ. Բաղիրով, Բաքվի և Ադրբեջանի բոլշևիկյան կազմակերպության պատմությունից, էջ 196—197։

Նույն թվականի մարտ-օգոստոս ամիսներին Բաքվի պրոլետարիատը բոլշևիկների ղեկավարությամբ մի շարք քաղաքական գործադուլներ է կազմակերպում։ Գործադուլավորները անգլիական ինտերվենտներից և մուսավաթական «կառավարությունից» միահամուռ կերպով պահանջում են թույլ տալ նավթի արտահանումը դեպի Սովետական Ռուսաստան, վերացնել Ռուսաստանի բլոկադան։ Չնայած գործադուլների ճնշմանը, բանվորները շարունակում են հերոսական պայքարը, նորից ու նորից ցույց տալով իրենց մարտական ոգին, ռևոլուցիոն կորովը և եղբայրական համերաշխությունը Սովետական Ռուսաստանի բանվորների ու գյուղացիների նկատմամբ։

Հակառակ ինտերվենտների ու մուսավաթիստների դաժան ռեժիմին, բոլշևիկների ղեկավարությամբ Ադրբեջանում լայն ծավալ է ընդունում գյուղացիական ռևոլուցիոն շարժումը, որը «բացառիկ մեծ թափ ստացավ 1919 թվականի ամառը»[1] Ղազախի, Նուխու, Գյանջայի (այժմ Կիրովաբադ) և Լենքորանի գավառներում։ Ինչպես նշում է ընկեր Մ. Դ. Բաղիրովը,[2] Գյանջայի գավառի ադրբեջանցի և հայ գյուղացիները ժողովրդական հերոս Կաղբը Մամեդի (Մամեդ Մամեդովի) գլխավորությամբ կազմակերպելով պարտիզանական ջոկատներ, հաջողությամբ պայքարում էին մուսավաթական զինված բանդաների դեմ։ Ընալով այդ շարժումը ավելի ու ավելի լայն ծավալ էր ընդունում և սպառնալից վտանգ ստեղծում մուսավաթական իշխանության համար։ Մի շարք վճռական մարտերում պարտիզանները մեծ ջարդ են տալիս հակառակորդին և ետ շպրտում նրան։ Սեպտեմբեր ամսին թշնամին կենտրոնացնելով մեծ քանակությամբ նոր ուժեր և լայն չափով օգտագործելով տեղական կուլակներին ու կալվածատերերին, կարողանում է ճնշել այդ շարժումը և գազանային դատաստան տեսնել նրա ղեկավար ադրբեջանական ժողովրդական հերոս Կաղբը Մամեդի հետ։ Բայց մուսավաթական դահիճների այդ ստոր ոճրագործությունը ևս չկարողացավ կանգնեցնել երկրում սկսված գյուղացիական շարժման հետագա ծավալումը, որը չտեսնված թափ ստացավ 1919—1920 թթ. ձմռանը, երբ Ղազախի, Նուխու, Գյանջայի և Լենքորանի գավառներում բոլշևիկների ղեկավարությամբ տեղի էին ունենում գյուղացիական զինված ապստամբություններ մուսավաթիսանների իշխանությունը տապալելու և սովետական կարգեր հաստատելու համար։

Մշտապես հետևելով և ուղղություն տալով Ադրբեջանի բոլշևիկների աշխատանքներին, ընկեր Ստալինը խնդիր դրեց՝ ծավալվող ռևոլուցիոն շարժումը ամբողջ երկրում գլխավորելու և բուրժուա-կալվածատիրական իշխանությունը տապալելու, սովետական կարգեր հաստատելու համար «անհրաժեշտ է ստեղծել Ադրբեջանի բոլշևիկների միասնական, միաձույլ կոմունիստական պարտիա»[3]։

Այդ նպատակով 1920 թվականի փետրվար ամսին անլեգալ պայմաններում Բաքվում տեղի է ունենում Ադրբեջանի Կոմունիստական (բոլշև-

---

[1] Մ. Դ. Բաղիրով, Բաքվի և Ադրբեջանի բոլշևիկյան կազմակերպության պատմությունից, էջ 202։

[2] Նույն տեղում, էջ 202—204։

[3] Նույն տեղում, էջ 205։

վիկների) պարտիայի 1-ին համագումարը։ Կազմավորվում է Ադրբեջանի Կոմունիստական (բոլշևիկների) պարտիան։

«Ադրբեջանի Կ(բ)Պ ստեղծելու համար մղած պայքարում հսկայական դեր խաղացին ընկ. ընկ. Կիրովը և Միկոյանը, որոնք գործնականորեն իրականացրին ընկեր Ստալինի ցուցումները,—ասում է ընկեր Բաղիրովը։

Հակառակ բուրժուական նացիոնալիստների որոգայթներին, Ադրբեջանի բոլշևիկները ՌԿ(բ)Պ Կենտկոմի ղեկավարությամբ, Լենինի և Ստալինի օգնությամբ կարողացան ստեղծել Ադրբեջանի բոլշևիկների կոմունիստական պարտիան։

Ադրբեջանի Կոմունիստական պարտիան կազմակերպվեց որպես ՀամԿ(բ)Պ հավատարիմ և միաձույլ ջոկատը, որին ստեղծեց, կոփեց ու ղեկավարեց մեծ Ստալինը»[1]:

Համագումարը նշեց Ադրբեջանում սովետական կարգերի հաստատման կոնկրետ ծրագիրը և մոբիլիզացրեց երկրի աշխատավորությանը՝ այդ ծրագրի կենսագործման համար։ Նա իր ընդունած բանաձևում կոչ արեց նաև Վրաստանի և Հայաստանի աշխատավորներին՝ բոլշևիկների պարտիայի ղեկավարությամբ կուռ շարքերով զենքը ձեռքին դուրս գալ օտարերկրյա ինտերվենտների ու նրանց կամակատար բուրժուա-նացիոնալիստական կառավարությունների դեմ, տապալել նրանց իշխանությունը և ամբողջ Անդրկովկասում հաստատել սովետական կարգեր։

Այդ ժամանակ Ռուսաստանի հարավում տեղի էին ունենում խոշորագույն իրադարձություններ, որոնք մեծ չափով նպաստեցին սովետական իշխանության համար մղվող պայքարի ծավալմանը ինչպես Ադրբեջանում, նույնպես և ամբողջ Անդրկովկասում։ Մեծ հաջողությամբ կենսագործելով ստալինյան ստրատեգիական հանճարեղ պլանը, Սովետական Ռուսաստանի հերոսական Կարմիր Բանակը ջախջախիչ հարվածներ հասցնելով Դենիկինի սպիտակգվարդիական բանդաներին, հաղթական կերպով առաջ էր շարժվում դեպի հարավ։ 1920 թվականի սկզբին նա ազատագրել էր ամբողջ Ուկրաինան և Հյուսիսային Կովկասը։ Ճնշված ժողովուրդների ազատարար Կարմիր Բանակը հասել էր Անդրկովկասի դռներին։

Ոգևորված այդ մեծ հաղթանակներով, Բաքվի պրոլետարիատը և Ադրբեջանի աշխատավորները 1920 թվականի ապրիլի 28-ին բոլշևիկների ղեկավարությամբ զինված ապստամբություն են բարձրացնում մուսավաթիստների իշխանության դեմ և տապալում այն, Ադրբեջանում հաստատելով սովետական կարգեր։ Ապստամբության առաջին իսկ մոմենտին Ադրբեջանի ժամանակավոր Ռևոլուցիոն Կոմիտեն հատուկ դիմում է հղում սոցիալիստական ռևոլուցիայի մեծ առաջնորդ Վ. Ի. Լենինին և հայտնում Ադրբեջանի աշխատավորների հաղթանակի մասին ու խնդրում Սովետական Ռուսաստանի օգնությունը։ Լենինի—Ստալինի ցուցումներով սոցիալիստական ռևոլուցիայի դրոշը բարձրացրած Ադրբեջանի աշխատավորությանը օգնության է հասնում Սովետական Ռուսաստանի 11-րդ բանակը՝ Լենինի—Ստալինի հավատարիմ զինակիցներ Ս. Օրջոնիկիձեի, Ս. Մ. Կիրովի և Ա. Ի. Միկոյանի գլխավորությամբ։ Խոսելով այդ մասին, 1936 թվականի

[1] Մ. Դ. Բաղիրով, Բաքվի և Ադրբեջանի բոլշևիկյան կազմակերպության պատմությունից, էջ 203։

հունվարի 21-ին Կրեմլում Սովետական Ադրբեջանի դելեգացիայի ընդունելության ժամանակ արտասանած ճառում Ս. Օրջոնիկիձեն ասել է.

«Համարյա 16 տարի առաջ ընկերներ Լենինի և Ստալինի անմիջական ցուցումով ընկերներ Կիրովի և Միկոյանի հետ միասին մենք Կարմիր Բանակով օգնության էինք գնում Բաքվի պրոլետարիատին, որպեսզի օգնեինք նրան ազատագրվելու մուսավաթական կառավարությունից, բեկերի ու կապիտալիստների կառավարությունից, գազանային ազգամիջյան ատելության ու կոտորածի կառավարությունից»[1]։

Սովետական կարգերի հաստատումով Ադրբեջանի աշխատավորները ձեռք են բերում իրենց ազատությունն ու անկախությունը, որի համար պայքարել էին երկար ժամանակ։

Ադրբեջանում Սովետական կարգերի հաստատման 25 ամյակի առթիվ ՍՍՌՄ Մինիստրների Սովետի և Համ Կ(բ)Պ Կենտկոմի ողջույնի հեռագրում ասված է. «Սովետական իշխանությունը ոչնչացրեց Ադրբեջանի բանվորների ու գյուղացիների վրա դարերով ծանրացած օտարերկյա կապիտալիստների, ցարական չինովնիկների, բեկերի ու խանների ճնշումը և լիկվիդացրեց ազգային խտրությունը Ադրբեջանի ժողովուրդների միջև»[2]։

Ադրբեջանում սովետական կարգերի հաղթանակը կարևորագույն նշանակություն ունեցավ Հայաստանում և Վրաստանում ռևոլուցիոն շարժման նոր վերելքի գործում։ Հենց այդ օրերին Հայաստանում լայն ծավալ ստացավ դաշնակների բուրժուա-նացիոնալիստական իշխանության դեմ ուղղված մասսայական ռևոլուցիոն շարժումը, որն ընդգրկեց համարյա ամբողջ Հայաստանը։ Դա 1920 թվականի մայիսյան հերոսական ապստամբությունն էր։

Ադրբեջանում սովետական իշխանությունն ամրապնդելու և Անդրկովկասի բոլշևիկներին օգնելու և ամբողջ երկրամասում սոցիալիստական ռևոլուցիայի հաղթանակն ապահովելու նպատակով, 1920 թվականի նոյեմբերին ընկեր Ստալինը գալիս է Բաքու։ Բաքվի պրոլետարիատը մեծ առաջնորդին դիմավորում է անհուն ցնծությամբ։ Մոտիկից ծանոթանալով Հայաստանի և Վրաստանի դրությանը, ընկեր Ստալինը Անդրկովկասի բոլշևիկների առաջ խնդիր է դնում մոբիլիզացնել բոլոր միջոցներն ու ուժերը և տապալել բուրժուա-նացիոնալիստական կառավարությունները նաև Հայաստանում ու Վրաստանում։ Ձինված լենինյան-ստալինյան ցուցումներով և ստանալով ռուս մեծ ժողովրդի, նրա հերոսական 11-րդ Բանակի եղբայրական օգնությունը, Հայաստանի բանվորներն ու գյուղացիները 1920 թվականի նոյեմբերի 29-ին տապալում են դաշնակների տիրապետությունը և հաստատում սովետական կարգեր։ 1921 թվականի փետրվարի 25-ին Վրաստանի աշխատավորները ևս 11-րդ Բանակի օգնությամբ տապալում են շահագործողների տիրապետությունը և Վրաստանում հաստատում սովետական կարգեր։

Սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում, ռուս մեծ ժողովրդի անշահախնդիր եղբայրական օգնությամբ Սովետական Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի աշխատավորները բոլշևիկների պարտիայի

---

[1] Ս. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, 1918—1937, Հայպետհրատ, 1950 թ., էջ 544։

[2] «Կոմունիստ», օրգան Ադրբեջանի Կ(բ)Պ Կենտկոմի և Բաքվի Կոմիտեի, 5 մայիսի 1945 թ.։

ղեկավարությամբ ձեռնամուխ են լինում սոցիալիստական շինարարության մեծ գործին։

* * *

1952 թ. ապրիլի 28-ին լրացավ Ադրբեջանում սովետական կարգերի հաստատման 32-րդ տարեդարձը։ Լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության կենսագործման շնորհիվ սովետական իշխանության տարիներին Ադրբեջանը հիմնովին վերակերտվել է։ Հետամնաց ու գաղութային երկրից նա դարձել է աշխարհում ամենահզոր պետության՝ Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության իրավահավասար անդամը՝ հարաճուն կերպով զարգացող իր սոցիալիստական հզոր արդյունաբերությամբ, առաջավոր կոլտնտեսային գյուղատնտեսությամբ և ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայով։ Նա դարձել է Սովետական Միության ծաղկող ու առաջավոր ռեսպուբլիկաներից մեկը։ Նախասովետական շրջանի համեմատությամբ Սովետական Ադրբեջանում ստալինյան մինչպատերազմյան հնգամյակների տարիներին նավթի հանույթը ավելացել էր երեք անգամ, բենզինի մշակությունը՝ 47 անգամ, էլեկտրաէներգիայի արտադրությունը 18 անգամ։ Արդյունաբերության բոլոր ճյուղերի արտադրանքը միասին վերցրած, այդ ժամանակամիջոցում ավելացել էր 19 անգամ։ Սոցիալիստական գյուղատնտեսության մեջ առաջատար կուլտուրայի՝ բամբակի ցանքատարածությունները աճելով, հասել էին 200 հազար հեկտարի։

Սոցիալիստական շինարարության բնագավառում ձեռք բերած այդ հաջողությունների շնորհիվ ադրբեջանական հին, բուրժուական ազգի փլատակների վրա կազմավորվել ու զարգանում է ադրբեջանական նոր, սոցիալիստական ազգը, որը արմատապես տարբերվում է հին ազգից ինչպես իր դասակարգային կառուցվածքով, նույնպես և նպատակներով ու քաղաքական-բարոյական կերպարանքով։

Սովետական Միության Հայրենական Մեծ պատերազմի տարիներին Բաքուն և ամբողջ Ադրբեջանը դարձան հերոսական Կարմիր Բանակի կարևորագույն արսենալներից մեկը։ Էլ ավելի աճեցին ու մեծացան Սովետական Ադրբեջանի նվաճումները հետպատերազմյան ստալինյան հնգամյակի հաջող կենսագործման շնորհիվ։

Այդ բոլոր հաջողությունները Ադրբեջանի բոլշևիկների ու ամբողջ աշխատավորների կողմից ձեռք են բերված լենինյան-ստալինյան աննկուն մարտիկներ Ս. Օրջոնիկիձեի, Ս. Մ. Կիրովի, Լ. Պ. Բերիայի և Մ. Դ. Բաղիրովի անմիջական ղեկավարությամբ՝ ժողովրդի ստոր թշնամիների՝ տրոցկիստների, բուխարինականների, բուրժուական նացիոնալիստների և մյուս կոնտրռևոլուցիոն ուժերի դեմ մղված վճռական ու անողոք պայքարում։